

նաւորիլ. մինչդեռ այն որ բանտարգել եղած չէ և կը ծնանի տասնեւվեց օրուան մէջ, կրնայ թաշիլ երկու կամ երեք օրէն, և բեղնաւորիլ իր ծննդենէն վեց կամ եօթն օր ետքը:

Երգ իզիլ. — Բանտարկեալ է գը տեսակ մը ձայն կը հանէ բլլին մէջէն՝ որ կոչի երգ. և կը լսուի այն փեթակներուն մէջէն՝ որ պիտի տան երկրորդական պարսեր. և ամէն անգամ որ լսուի այդ երգը, անհանգիստ կ'ըլլան մեղուներն և իսկոյն կը լռեն: Այդ պիտի ձայն մը կը հանեն ևս իրենցմէ ծնած էգերն ալ, կանչելով թիւ, թիւ, րոպ. մինչդեռ բանտարկեալներն կը կանչեն սովորաբար թուտ, թուտ: Խիստ քիչ անգամ կը պատահի որ բեղնաւորեալ մայրերն երգեն. և յայնժամ միայն կը բարձրացնեն իրենց ձայնը, երբ կը ստիպուին և հեռացեալ են իրենց բնակարանէն:

Մայր մեղուի տարիքին ազդեցութիւնը


ծու ածելու եւ զաղթականութեանց համար. — Մայր մեղուն, ինչպէս ըսինք ուրիշ տեղ, կրնայ պարիլ չորս կամ հինգ տարի: Առաջին երկու տարիներն են իրեն մեծագոյն բեղնաւորութեան տարիներ: Այդ հասակին մէջ աշխոյժ է, փայլուն, օսկեգոյն, մանաւանդ փորին առաջին մանեակները. և կռուոյ ժամանակ աւելի զօրաւոր կը գտնուի քան գծերերը: Չորս կամ հինգ տարեկան հասակին մէջ չէ այնչափ աշխոյժ և զօրաւոր, և գրեթէ կ'ըլլայ անբեղնաւոր: Իր կուրծքին վրայի մանր մազերուն շատերը թափած կ'ըլլան, գոյնը կը օճեայ, հասակը կը կարճի և թւերը կը պատռուին:

Այն զաղթականութիւններն՝ որոց մայրը ծեր է՝ կը կորնչին, որովհետեւ մայրը անկարող է ձու ածել: Ուստի հարկ է որ մանկահասակ մայր ունենան, և հետեւաբար ծերերուն տեղ մանկահասակ մայրեր փոխանակել:

Հ. Մ. Բ-Լ-Է



# ԵՐԻՈՊԻՈՅ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԸ



Եւրոպական պետութեանց մէջ ամենէն աւելի բազմաթիւ մատենադարան և գրեանք ունեցող առաջին տէրութիւնն է Աւստրիա. ունի 577 մատենադարան և 5,475,738 հատորներ, ի բաց առեալ քարտէսները և ձեռագրերն: Երկրորդն է Գաղղիա, ունի 500 մատենադարան և 4,538,100 հատորներ, և 135,300 ձեռագիրք: Երրորդն է Իտալիա, 493 մատենադարան և 4,439,281 հատորներ, իսկ ձեռագիրք 330,570: Զորորդն է Պրուսիա, ունի 398 մատենադարան և 2,640,250 հատորներ, ձեռագիր 58,000: Հինգերորդն Անգլիա, 200 մատենադարան և 2,871,493 հատորներ, իսկ ձեռագիր 26,000: Վեցերորդն Բաւերիա, ունի 169 մատենադարան և 1,368,500 հատորներ, իսկ ձեռագիրք 23,000: Եօթներորդն Ռուսիա, ունի 145 մա-

տենադարան և 952,000 հատորներ, իսկ ձեռագիր 24,300:

Իսկ առանձին առնուով կաձառները (Instituts), Գաղղիոյ Ազգային մատենադարանն որ ամենէն աւելի մեծն է, կը բովանդակէ 2,078,000 հատորներ: Լոնդրայի Բրիտանական Թանգարանն (British-Museum) մէջ միլիոն հատոր: Մոնակոյի արքունի մատենադարանն 800,000: Բերլինին 700,000: Դրեսդային 500,000: Վիեննային 420,000: Ռեքոդի Համալսարանին՝ յԱնգլիա 300,000: Իսկ Կիդելբերգինն ի Վերմանիա 300,000: Վատիկանի մատենադարանն ի Հռոմ՝ ունի 30,000 հատորներ, բայց ձեռագրաց մասին ամենէն ճոխն է, որոց թիւն կը հասնի 25,000:

